18 հուլիսի 2015 թ. N 483-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի «Պետական բաժնետոմսերի կառավարման լիազորություններ վերապահելու մասին» N 43 որոշման առաջին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 4-ի ««Քաշաթաղի ջրամատակարարում» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 489-Ա, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 14-ի ««Մարտակերտի ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 359-Ա և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի ««Արցախհիդրոսերվիս» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 764-Ա որոշումների 3-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը» բառերը փոխարինել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**